

Տ. ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆ
(ավազանի անունը՝ Արծվի)

Ծնվել է 1966 թ. ապրիլի 23-ին Կապան քաղաքում:

1973-1983 թթ. սովորել և ավարտել է տեղի № 6 միջնակարգ դպրոցը:

1983-1985 թթ. ընդունվել և ավարտել է Երևանի № 8 Գեղարվեստի ուսումնարանը:

1986-1988 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1988-1991 թթ. ծառայել է Կապանի շրջանի Գեղանուշ գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցում, որպես դպիր:

1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1992 թ. հունվարի 18-ին Ս. Հռիփսիմե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Սյունյաց եպիսկոպոսական Աթոռի պայքարը ունիթոռների դեմ 14-15-րդ դդ.» թեմայով՝ արժանանալով «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:

1997 թ. մայիսի 15 Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հրամանով նշանակվել է Գուգարաց թեմի Իջևանի տարածաշրջանի հոգևոր տեսուչ:

2001 թ. փետրվարի 21-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Թագավորօրհնեքի կանոնը Հայ Եկեղեցում» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է Մասնավոր վարդապետական չորս աստիճան: